— Ֆարհատ, չե՞ս ճանաչում ինձ...

— Ա՜խ, Կարո, սիրելի՜ ընկեր, միթէ՞ դու ես... Չէ՜, չէ՜, դու Կարօն չես... Որտեղի՞ց եկար... ո՞ւր էիր... քեզ համար ասում էին...

Այսպէս, իմ շփոթութեան մէջ, սկսեցի հարցնել հին բարեկամիս, որ գրկելով ինձ, խուլ ձայնով պատասխանեց.

— Ես եմ, ես Կարօն եմ...

Իմ ուրախութեանը չափ չկար. ես երեխայի նման քարշ ընկայ նրա պարանոցից, համբուրում էի կարօտալի աչքերը, համբուրում էի երեսը, ձեռքերը եւ երկար չէի բաժանւում նրանից: Ես պատմեցի այն աւուր անցքը, իմ բանտարկութիւնը, իմ փախուստը եւ յայտնեցի, թէ որպիսի՜ դիտաւորութիւն բերեց ինձ գետի ափի մօտ: Նա սկսեց ծիծաղել իմ միամտութեան վրայ, ասելով.

— Խելքդ կորցրե՞լ ես, ինչ է:

— Ապա ի՞նչ անեմ, — հարցրի ես:

— Գցի՜ր գետը այդ սատանայի կծիկը: — Պրծաւ գնաց...

Նա ցոյց տուեց Դանիէլի գրքի վրայ, որը, չգիտեմ ինչպէս էր պատահել, առել էի ինձ հետ: Ես առանց մտածելու, գիրքը նետեցի գետի մէջ, ինձ այնպէս երեւաց, թէ նրա հետ սրտիս բոլոր տանջանքները խորասուզուեցան սառն ալիքների մէջ...

— Դէ՜, շատ լաւ, — ասաց նա: — Հիմա գնանք:

Ես հետեւեցի նրան, ամենեւին չհարցնելով, թէ ուր է տանում ինձ:

Լուսնի եղջիւրը երեւեցաւ հորիզոնի ծայրից, եւ գիշերի թանձր խաւարը փոքր-ինչ պարզուեցաւ: Օդը իր հովասուն սառնութեամբ բաւականին կազդուրեց իմ բորբոքուած գլուխը: Ես սկսեցի ազատ շունչ քաշել: Այժմ ինձ այնքան լաւ էի զգում, կարծես, ոչինչ չէր պատահել ինձ հետ:

Կարօն տասն եւ երկու տարի առաջ թողեց մեր դպրոցը եւ այնուհետեւ անյայտացաւ: Նա դուրս եկաւ մեր դպրոցից, առանց մի այբի կտոր անգամ իր հետ տանելու: Իսկ այդ տասն եւ երկու տարուայ ընթացքում որքա՜ն փոխուել էր նա: Լղարիկ, փոքրիկ, վատառողջ Կարօն այժմ աճել, հասունացել, հսկայական ձեւ էր ստացել: Նրա համարձակ ընթացքը, յանդուգն կերպարանքն արտայայտում էին վեհութիւն, ուժ եւ անձնավստահութիւն: Կարօն չորս տարով միայն մեծ էր ինձանից, բայց ես, թէեւ բաւական բարձր էի հասակով, դարձեալ իմ գլուխը հազիւ հասնում էր նրա ուսերին: Իմ երեսի վրայ մազերի հետքեր անգամ չկային, իսկ նրա վերեւի շրթունքը դեռ նոր սկ-